Արձանագրություն N 2

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՔԲԿ-ԲՄԱՊՁԲ-25/7» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17 փետրվարի 2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Պողոսյան

Ն. Լալայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Գրիգորյան

Օրակարգ

1. Բաց մրցույթի ձևով գնում կատարելու ընթացակարգի հրավերով հայտ ներկայացրած մասնակիցների մասին
2. Բաց մրցույթի ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտի բացումը
3. Հանձնաժողովի որոշումների մասին

1. Բաց մրցույթի ձևով գնում կատարելու ընթացակարգի հրավերով հայտ ներկայացրած մասնակիցների մասին

1.1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել.

| | |
|---|---|
| 1. «ԱՄԱ ՄԵԴԻՔԼ» ՍՊԸ | ք. Երևան, Հալաբյան 41/41, 055850025, info@amamed.am |
| 2. «ԷՄՀԱՐ» ՍՊԸ | ք. Երևան,Մամիկոնյանց փ. 29շ. 68 բն, 077484008, emharllc@gmail.com |

2. Բաց մրցույթի ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտի բացումը

2.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան և ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին, բացառությամբ «ԷՄՀԱՐ» ՍՊԸ -ի՝ Հավելված 1.1 –ում անհրաժեշտ է նշել ներկայացված ապրանքի հստակեցված տեխ. բնութագիրը, արտադրող ու ֆիրմային անվանում:

Ընթացակարգի մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները հետևյալն են՝

/ՀՀ դրամ/

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | «ԱՄԱ ՄԵԴԻՔԼ» ՍՊԸ | | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| | | Գինն՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | |
| 1 | Ռենտգեն սարքավորում | 45 940 000 | | 45 940 000 |

/ՀՀ դրամ/

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | «ԷՄՀԱՐ» ՍՊԸ | | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| | | Գինն՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | |
| 1 | Ռենտգեն սարքավորում | 65 500 000 | | 65 500 000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

## 3 Հանձնաժողովի որոշումների մասին

Որոշվեց՝

3.1 Հաշվի առնելով «ԷՄՀԱՐ» ՍՊԸ -ի հայտում արձանագրված անհամապատասխանությունը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի» կազմակերպման մասին կարգի 41-րդ կետով, հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ՔԲԿ-ԲՄԱՊՁԲ-25/7» ծածկագրով բաց մրցույթի նիստը կշարունակվի փետրվարի 19-ին ժամը 11:00 – ին:

3.2 2025 թ. -ի փետրվարի 19-ի նիստին հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «ԷՄՀԱՐ» ՍՊԸ -ն ներկայացրել է շտկում:

3.3 Հիմք ընդունելով հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հայտը՝ Հանձնաժողովը որոշեց «ՔԲԿ-ԲՄԱՊՁԲ-25/7» ծածկագրով բաց մրցույթի ընտրված մասնակից ճանաչել «ԱՄԱ ՄԵԴԻՔԼ» ՍՊԸ-ին :

3.4 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ:

Անգործության ժամկետը սահմանվում է 10 օրացուցային օր, ներառյալ 01 մարտի 2025թ.:

3.5 Անգործության ժամկետի ավարտին չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _______________ Լ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _______________ Դ. Պողոսյան

_______________ Ն. Լալայան

Քարտուղար՝ _______________ Մ. Գրիգորյան